վասն Հայոց միայն ուխտ գրեն։ Հայք՝ եթէ այդպէս իցէ
ո՞ւր դիցուք զհրաման Արքային, թէ ժամանակ առ ժա-
մանակ 'ի պատահիլ խռովութեանց հակառակ իմաստիւք
հրաման տուեալ են, այլ վարեսցին ըստ հրովարտակացն
զոր 'ի սոյն նուագի ետու երկուց ազգաց. զի եթէ մի են
հրովարտակք երկոցունց, աւելորդ են այդպիսի բանք, և
ոչ գտանեն տեղի 'ի լսելիս մեր. զի զոր ինչ կատարեն
Ցոյնք ըստ օրինաց իւրեանց, զնոյն և Հայք կատարեսցեն։
Զանձրացուցիք զմեզ ասէ, զի ընչասոյառ պարտասե-
ցաք, այլ բանք ձեր ոչ սպառեցան։ Հեռացան փոքր
ինչ Հայք և Ցոյնք, Դատաւորն և Մուվէլլային սկսան
խորհիլ, ապա կոչեալ զՑոյնս խօսեցաւ յունկանէ, և յոր-
դորէր զՀայս հնազանդիլ։ Սակայն Հայք ասացին, ոչ ինչ
օգտին աղաչանք, զի այս հրաման Արքային է և գործ ազ-
գային, մեք իբրեւ Երեսփոխանք նոցին, զոր ինչ պարտն
է զայն խօսիմք, և ոչ երբէք բաժանիմք 'ի բաժանորդ բա-
ռէն. եթէ կատարէք ըստ հրամանի Արքային՝ բարի՝ եւ
եթէ ոչ՝ որպէս գիտէք այնպէս արարէք։ Ապա ասէ ցՆուրի
Էֆէնտի, սոքա երկոքեան չունին տալ երբէք հաճութիւն,
ելեալ կարգադրեսցուք, եթէ հաճին՝ բարի, իսկ եթէ ոչ՝
ինքեանք գիտասցեն։ Եւ եկեալ առաջի խորանին Հայոց,
խօսէր ընդ նոսա բարկութեամբ, և 'ի չտալ նոցա տեղի
շողոքորդ բանից նորին, կոչեաց առ ինքն զԳէորգ Պոտուռ,
և սկսան կռուել ընդ միմեանս վասն բառնալոյ անտի ըզ-
պատկերս Ցունաց եւ կախելոյ կանթեղս յԱյրն։ Եւ զկնի
բանից և վիճմանց՝ իջին ամենեքեան յԱյրն. յայնժամ ա-
սէ Դատաւորն՝ ահա ետու ձեզ հրաման կախելոյ զտասն
կանթեղս, զի բաժանորդ էք ընդ Ցունաց, զչորսն 'ի վե-
րայ Ծննդեան տեղւոյն եւ զվեցն յառաստաղէ Այրին 'ի
պատշաճաւոր տեղիս, և յաղաղակելն Հայոց թէ անմարթ
է մեզ պակաս ինչ ունիլ՝ քան զոր ունին Ցոյնք, Դա-
տաւորն մեղմով աղաչէր զնոսա շատանալ նոքօք, ապա
հարեալ բեւեռս կախեցին զչորս կանթեղս 'ի վերայ Ծնընդ-
եան տեղւոյն 'ի փառս մանկացելոյն Յիսուսի և 'ի պա-
տիւ ազգին Հայոց։

Իբրեւ կամեցան կախել զմի կանթեղ 'ի վերայ աստի-
ճանաց հիւսիսային դրան, ընդդէմ կացեալ Լատինաց ա-